



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 3 » ապրիլ 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 125-Ա

«ԿՈՆԴՈՐ ԷՅՐԼԱՅՆՁ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանը և «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերության 2023 թվականի մարտի 29-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2023 թվականի մայիսի 20-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ

Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/- Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի N 372-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3"Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

4.Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 061/2023  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ,  
ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՄ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
PERMISSION 061/2023

TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը  
Aircraft Operator

«Կոնդոր Էյրլայնզ» ՍՊԸ  
"Condor Airlines" LLC

Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)  
Type(s) of aircraft(s)

A320, A321, A330, B757-300, B767-300

Հաճախականությունը  
Frequency

շաբաթական 2 չվերթ  
2 flights per week


Երթուղին  
Air route

Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-  
Ֆրանկֆուրտ/EDDF/  
Frankfurt/EDDF/-Yerevan/UDYZ/-  
Frankfurt/EDDF/

Թույլտվության գործողության ժամկետը  
Permission validity

20/05/2023 մինչև 28/10/2023  
20/05/2023 till 28/10/2023

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
CHAIR OF THE CIVIL AVIATION  
COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

